Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2286

Մոլորեալ

Համբոյր կամ

պարծանացներին կերակուր

84
Մ-86

Կ. Դոլեա

1893

84
Մ-86

2003
2011

84-2
Մ-86

ՄՈԼՈՐԵԱԼ

# ՃԱՄԲՈՐԴԸ

ԿԱՄ

# ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԿԵՐԱԿՈՒՐԸ

ԿԱՏԱԿԱԽԱՂ ՄԷԿ ԱՐԱՐՈՎ

*ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԻԵՐԷՆԷ*

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Տ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

— Բ. Տպագրութիւն —

معارف نظارت جليله سنك رخصتنامه سيله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
(Գրաշարաց ընկ.)
1893

ՄՈԼՈՐԵԱԼ

# ՃԱՄԲՈՐԴԸ

ԿԱՄ

# ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԿԵՐԱԿՈՒՐԸ

ԿԱՏԱԿԱԽԱՂ ՄԷԿ ԱՐԱՐՈՎ

*ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԻԵՐԷՆԷ*

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

— Բ. Տպագրութիւն



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱ...
С.С.Р.А. Публичная Библио...
7/XI--1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ...

معارف نظارت جلیلهسنك رخصتنامهسیله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
(Գրաշարաց Ընկ.)
1890

ԱՆՁԻՆՔ

ԲԱՐԲԱՆԻԿՈՍ. — Գիւղացի։
ԳՐԻՃԻՏԷ. — Իր կինը։
ԲԱՆԿՐԱՏԻՈՍ. — Գրիճիտէի վարժապետ սիրահարը։
ԲԷԹՌՍԱՔՕ. — Ցիսնապետ. «Մոլորեալ ճամբորդը»
ՊՐՈԿՈԼՈՍ. — Ծառայ։

«Անցքն է Ֆրանսայի գիւղերէն մէկուն մէջ։»

# ՄՈԼՈՐԵԱԼ ՃԱՄԲՈՐԴԸ

## ՏԵՍԻԼ Ա.

Գրիճիտէ եւ Պրոկոլոս

Պրոկ.— Ըստծիս պէս, սիրելեալ սիկլին Գրիճիտէ, մենք կը յոգնինք՝ մեծերնիս կ'ուտեն, մենք կը մշակենք՝ անոնք կը հնձեն. չենք չնորհք բան մ'ալ վաստկինք նէ՝ ձեռքերնուս կառնեն։

Գրիճ.— Հովը պզտիկ յարդերը կը ցրուէ, ստակը ստակին եռեւէն կը վազէ կ'ըսեն, չէ՞ս գիտեր։

Պրոկ.— Ատոր հետ մեկտեղ, խրատունք ալ ունինք։

Գրիճ.— Աշխարհս միշտ ատանկ եղած է։

Պրոկ.— Երիկդ ինծմէ բաղդաւոր է։

Գրիճ.— Ի՞նչպէս. . .

Պրոկ.— Մեկտեղ սեղան կը նստիս, ալ ի՞նչ կ'ուզես։

Գրիճ.— Զարմանալի բան. աղէկ ի՞նչ կ'ըլլայ։

Պրոկ.— Երկու գլուխ էք, զաւակ չունիք, բան չունիք։

Գրիճ.— Քեզի բան մը ըսե՞մ, թող էրիկս հոս ըլլայ, ան ուրիշ բան չեմ ուզեր. (Մեկուսի) ի՜նչ ձանձրացուցիչ մարդ։

Պրոկ.— Նայէ՛, աս գիշեր դուրսը պիտի մնայ։

Գրիճ.— Նորէն կ'ըսեմ թէ ասոր համար շատ տրտում եմ։

Պրոկ.— Ահա առջին անգամ կը տեսնեմ կին մը՝ որ էրիկը չի գալուն վրայ կը տրտմի։

Գրիճ.— Անկէ հասկցիր որ տունը չգտնուած էրիկունը մութ կոխելուն պէս՝ անկողին կը մտնեմ. (Մեկ) գլխ չ'երթա՞ր։

Պրոկ. — Կարելի՞ բան է։

Գրիճ.— Եթէ հոս չըլլայիր, մինչեւ հիմա քնացած էի. (Մեկուսի) չի հասկնար։

Պրո.— Անանկ է նէ՝ ելլեմ երթամ, գլխու ցաւ չըլլամ.

Գրիճ.— Գիշեր բարի տէր Պրոկոլ, շատ շատ բարեւ կնկանդ։ (Մեկնելու պէս).

Պրոկ.— Գլխուս վրայ, մնաս բարով. . . չի մոռնաս, էրիկդ գայ նէ՝ ըսէ որ իրեն ըսելիք մը ունիմ։

Գրիճ. (Մեկուսի) — Գացուելի՛ք ելրան, (Բարձր) կ'ըսեմ, կ'ըսեմ. գիշեր բարի։

Պրոկ.— Գիշեր լոյս բարի. (Կը մեկնի)։

## ՏԵՍԻԼ Բ.

Գրիճիտէ մինակ, ետքը Բերուարօ

*Գրի.* — *Ինչ որ է, գնաց. կարծես թէ դիտմամբ կ՚ընէր. աղէկ եղաւ բանից. եթէ թող վարուէի, ո՞վ գիտէ մինչեւ ե՞րբ հոս պիտի մնար եւ գլխու ցաւ պատճառեր.* (Դուրսէն դուռը կը զարնուի) *դուռն է, ո՞վ կրնայ ըլլալ արդեօք.* (ձայնը առնելով) *ո՞վ է այն։*

*Բէթ.* (Դուրսէն) — *Այս գիշերուան համար զինուորական օթեւա՞ն մը։*

*Գրի.* (Մեկ.) — *Զինուորական օթեւան մը՜. վա՜յ ինծ, ի՞նչ ընելու եմ։*

*Բէթ.* (Նոյնպէս) — *Ճամբէս մոլորեցայ, վասն զի ձիւնը ճամբաները գոցեր է. եւ չպիտի կրնամ տեղս հասնիլ։*

*Գրի.* — *Աստուած իմ, հիմա ի՞նչ ընեմ։*

*Բէթ.* — *Պիտի բանաք թէ ոչ. ցրտէն կը սարսիմ. դուռը՜։*

*Գրի.* — *Բայց. . . մինակ եմ։*

*Բէթ.* — *Մինակ կամ ընկերով եղիք. ձեր ամուսնոյն մէկ բարեկամն եմ, դուռը բացէք։*

*Գրի.* (Մեկուսի) — *Ճար չի կայ, բանալու է.* (Կը բանայ ու Բերուարօ կը մտնէ)։

*Բէթ.* (Մտած ատենը) — *Մա՜հ եւ դժոխք. այսչափ դժուա՞ր է դուռ մը բանալ։*

*Գրի.* — *Կը վախնայի։*

*Բէթ.* — *Սատանա՞ն է եկողը որ կը վախնաս. Բարբանիկօսին տունը աս չէ՞. ահա իր հացէն։*

*Գրի.* — *Ճիշդ, ան է։*

*Բէթ.* — *Թէպէտ եւ զքեզ առաջին անգամ կը տեսնեմ։*

*Գրի.* — *Այո՛։*

*Բէթ.* — *Իր կինն ըլլալու ես։*

*Գրի.* — *Այո՛. պարոն.* (Մեկ.) *գալու ատենը գտաւ։*

*Բէթ.* — *Շիտակը ըսե՞մ, էրիկէդ աւելի ես զքեզ կը սիրեմ։*

*Գրի.* (Մեկ.) — *Ասոր ձեռքէն ի՞նչպէս ազատելու է։*

*Բէթ.* — *Ըսէ՛, նազելիս, ամուսինդ ո՞ւր է։*

*Գրի.* — *Բուլթիէ գիւղը գնաց. այս իրիկուն չի գար։*

*Բէթ.* — *Զըսե՞ս, յարմար ատենին եկեր եմ քեզի հետ տեսակցելու։*

*Գրի.* — *Շնորհակալ եմ, մե՜ղք որ քունս եկած է.* «Մեկ.» *աս պակաս էր։*

*Բէթ.* — *Գիւղացիի կերպեր մի՛ բանեցներ։*



*Գրի.* — *Յուսամ թէ խոհեմ էք, եւ այս առիթէն չէք ուզեր օգտուիլ։*

*Բէթ.* — *Այդ ալ խօ՞սք է. քիչ մը հետդ մնամ, քանի մը գաւաթ գինի նետեմ, եւ մինչեւ որ քունս գայ՝ երգեմ ու խօսիմ. ասկէ աւելին չեմ ուզեր։*

*Գրի.* — *Շնորհակալ եմ պարոն, բայց իմ աչքերս քունէն ծանրացած են,* մեկ *ի՞նչպէս խալըսելու է ասոր ձեռքէն։*

*Բէթ.* — *Բայց ես դեռ նոր եկայ, քիչ մ՚ հետս կենալու ես։*

*Գրի.* — *Ըսածդ ըլլալիք բան չէ. երբ ամուսինս հոս չըլլայ, շուտ մը անկողին կը քաշուիմ, ու չի ճանչցած մարդուս հետ չեմ տեսնուիր։*

*Բէթ.* — *Տեսնուէ որ ճանչնաս։*

*Գրի.* — *Խօսք չե՛ս հասկնար։*

*Բէթ.* — *Բարբանիկօսի պէս ամուսին մը ունենալէդ ետքը, այսչափ կոպտուելդ ի՞նչ պիտի ըլլայ։*

*Գրի.* — *Ի՞նչ ըսել կուզես պարոն. մենք պարկեշտ կաղաքցիներ ենք. կը հասկնա՞ս։*

*Բէթ* — *Ահա այսօր կանանց մէջ ամենէն առաքինին գտայ։*

*Գրի.* — *Ուզածդ ըսէ, բայց գիտցիր որ այս լերանց մէջ կը բնակին պարկեշտութիւն ու առաքինութիւն։*

*Բէթ.* — *Ես որ շատ մը քաղաքներ պտըտեցայ, կրնամ ըսել թէ տակաւին նմանդ տեսած չէի։*

*Գրի.* — *Գեղեցիկ գաղափար մը ունիս կանանց վրայ։*

*Բէթ.* — *Ի՞նչ ընեմ, իրենց գործերէն կը դատեմ։*

*Գրի.* — *Լաւ, բայց ձգէ որ գործիս երթամ. այս է քու ճրագդ, այս սանդուղէն վեր ելածիդ պէս պառկելու սենեակդ է։*

*Բէթ.* — *Քունս եկած չէ։*

*Գրի.* — *Իմս եկաւ, գիշեր բարի։*

*Բէթ.* — *Անունդ ի՞նչ է։*

*Գրի.* — *Գրիճիտէ։*

*Բէթ.* — *Ի՜նչ անուշիկ անուն. եկուր Գրիճիտէ, մէկ մէկ գաւաթ գինի պարպենք։*

*Գրի.* — *Չեմ ուզեր, կը հասկնա՞ս։*

*Բէթ.* — *Բայց խմելու է, ճար չի կայ։*

*Գրի.* — *Ալ բաւական է, ձեզ նման անձ մը իր պատիւը կը ճանչնայ։*

*Բէթ.* — *Այդ վիրաւորիչ խօսքերուդ պատասխանելով, ես*

ալ պիտի ըսեմ որ տանտիկնոջ մը խորհուրդներուն կա-րօտ չեմ, հասկցա՞ր, լաւ, հիմա գնա պառկէ, վաղը յուսամ թէ աւելի քաղաքավար կըլլաս։

Գրի. — Վաղուան համար խօսք չունիմ. գիշեր բարի. ճրագը մարէ որ վտանգ մը չի պատահի։

Բէթ. — Հոգ մի՛ ըներ։

Գրի. (մեկ)— Փառք Աստուծոյ, աղէկ խալըսեցայ (մեկնի)։

Բէթ. — Որո՞ւ մաքէն կանցնէր որ ասանկ լեռնային տեղ մը այսպիսի առաքինի կին մը գտնուէր, բայց վաղը ասոր երակը աղէկ մը զննել կ'ուզեմ (սանդուղեն կելլե)։

## ՏԵՍԻԼ Գ.

Բանկրատիոս դուռը բանալով մտնե. կը զգի. սեւ վերարկու մը առած ե. ձեռքը ուտելիքով լեցուն կողով մը,։

Բանկ.— Այս մթութիւնն ինչ ըլլալու է, արդեօք իմ աղուորիկ Գրիճիտէս քնանալո՞ւ գացեր է, հոս քիչ մը կե-նալ պէտք եղաւ, բերածներս կոտրել չեմ ուզեր, (կողովը անկիւն մը դնելեն ետքը) կամացուկ մը երթամ Գրիճի-տէյս սենեակին դուռը բանամ։

## ՏԵՍԻԼ Դ

Նոյն, Գրիճիտէ (մութին մեջ)

Գրի. — Մութը կոխեց, կարծեմ թէ գնացած ըլլալու է մեր պարոնը։

Բանկ. — Մօտն ըլլալու եմ, բայց այս խաւարին մէջ բան մը չեմ տեսնար։

Գրի. — Հոս մէկը ըլլալու է. ինչպէս կը դողամ։

Բանկ. — Եթէ չեմ խաբուիր, ոտնաձայն կայ։

Գրի. — Աս ո՞վ է։

Բանկ. — Ես եմ։

Գրի. — Դու ո՞վ ես։

Բանկ. — Իմ Գրիճիտէս, ես եմ, չճանչցա՞ր։

Գրի. — Ի՞նչ անիծեալ սովորութիւն ունիս, ատանկ գաղ-տագողի ներս մտնելու, ըսի քեզի ուրիշ անգամ որ հոս մարդ չեղած ատեն բանալիդ չի գործածես։

Բանկ. — Բայց ամուսինդ գալուն է. եւ կարծեմ թէ. . .

Գրի. — Չգիտե՞ս թէ վայրկեան մը առաջ ճամբէն մո-լորուած ճանապարհորդ մը եկաւ գիշերը հոս անցնելու։

Բանկ. — Վա՜յ թշուառական։

Գրի. — Կամաց խօսէ, կեցիր երթամ ճրագը առնեմ. (կ'երթայ)։



Բանկ. — Գնա սիրունիկս եւ անհամբեր քեզի կ'սպա-սեմ։ Աս ճանապարհորդն ալ գալն էր պակաս. համբերութիւնս կը հատնի, անանկ մէկը կնկան մը հետ մինակ ձգելը աղէկ բան չէ. մանաւանդ Գրիճիտէի պէս աղուոր աչուի մը հետ, ա՜հ, . . . աչքերս չորս բանալու եմ։

Գրի. — Ահա ճրագը։

Բանկ. — Փառք Աստուծոյ որ լոյս աչքով երեսդ տեսայ։

Գրի. Ձայն մի հաներ, այդ մարդուն վրայ շատ ապահով չեմ։

Բանկ. — Յոգնած ըլլալու է. կը քնանայ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

Նոյնք եւ Բէթ. (սանդուղին վրայեն)

Բէթ. (մեկ.)— Վարը մէկը ըլլալու է։

Գրի. — Ի՞նչ աղուոր բաներ բերեր հետդ, նայիմ։

Բանկ. —Ահա մեր փոքրիկ ճաշը։

Բէթ. (մեկ) — Լաւ, ես ալ կը ճաշեմ։

Գրի. — Կողովիդ մէջ ինչե՞ր կան։

Բանկ. — Մաքարոնեաններ. . . բայց ինչ բան. . . ըհ. մա, մա, մա, մա։ (կողովեն հանելով)

Բէթ. (մեկ.) — Մաքարոնեային սիրահարն եմ։

Բանկ. — Աս քեզի խոզի խորոված ազդր մը։

Բէթ. (մեկ.) — Այդ ալ կը կլլեմ։

Բանկ. — Աս երիշիկը սքանչելի է։

Բէթ. (մեկ.) — Սքանչելի, որովհետեւ գինի կը վերցնէ։

Գրի. — Հիմա խնլքս կը թացնեմ։

Բէթ. (մեկ.) — Ես ալ։

Բանկ. — Ասանք երկու շիշ հին գինի են. որ բարեկամ մը ինծի ընծայեց։

Բէթ. (մեկ) — Հին գինի . . . ո՜վ բաղդ։

Բանկ. — Է՛, ինչ կըսես։

Գրի. — Աս մաքարոնեանները տաքցնելու է, քառորդի մը գործ է։

Բէթ. (մեկ.) — Իրաւ, անոնց պաղը չուտուիր։

Բանկ. — Գնա, ես ամեն բան կարգի կը դնեմ. . . բայց շուտ եկուր, կոկորդս թմբուկ կը զարնէ։

Գրի. — Երթալ գալս մէկ կըլլայ (Պնակները կը տանի)։

Բանկ. — Շատ ճշմարիտ է, կերակուրը սիրած մար-դուդ հետ ուտես նէ՝ ախորժակդ կը տասնապատկի։

Բէթ. (մեկ.) — Իմ ախորժակս բացուելու կարօտ չէ։

Բանկ. — Սեղանը գնենք։

Բէթ. (մեկ.) — Ի՞նչ տաք արիւն մարդ է։

Բանկ. — 2 սպասաւոր, 2 անձեռոց, զոյգ մը գաւաթ, ամեն բան իր տեղն է։

Բէթ. (մեկ.) — Իմ բաժինս պակաս է։

Բանկ. — Երթամ աղ պղպեղ եւայլն բերեմ։

Բէթ. (մեկ.) — Ըրօր նայեցէք, տաք տաք ապտակ մը իջեցնելս կուգայ, բայց անուշութեամբ երթանք։

Բանկ. — Ա՛յ սիրունիկս, որչափ ալ ուշացայ., երթամ նայիմ ինչ կընէ։

Բէթ. (մեկ.) — Մ'ե՛րթար, մ'երթար, գործդ գէշ կըլլայ։

Բանկ. — Ա՛հա եկաւ (Պրիմիտէ մտնէ)։

Պրի. — Մինչեւ որ տաքնայ, քիչ մը խօսինք։

Բանկ. — Այս աղուորիկս, խօսինք. նայինք սա մոլորեալ ըսածդ ինտո՞ր մարդ է, երիտասա՞րդ է։

Պրի. — Է՜ն . . .

Բանկ. — Տարիքո՞տ է։

Պրի. — Չեմ կարծեր։

Բանկ. — Ուրեմն ինչ է։

Բէթ (մեկ.) — Հիմա պիտի տեսնես։

Պրի. — Ըստ իս անտարակին մէկն է.

Բանմ. — Աս ձախորդ եկաւ, անանկները շատ կը սիրեն զուարճանալ։

Բէթ. (մեկ.) — Ես քեզի կը հասկցնեմ ինչ ըլլալս։

Բանկ. — Թէ որ ամուսինդ վաղն ալ չի վերադառնայ՝ ես ատկէ չի պիտի զատուիմ։

Բէթ. (մեկ.) — Ո՞ւր տեղէն բռթաւ սա նորաձեւ ասպետը։

Պրի. — Բայց վաղը դպրոց չի կա՞յ։

Բանկ. — Ի՞նչ դպրոց, ինչ դպրոց։

Պրի. — Ի՞նչ պիտի ընես, ետքը չ'ըսեն որ. . .

Բանկ. — Ըսելիքնին ինչ է, վաղուան տեղ գալ Հինգշաբթի կուտամ դասը։

Բէթ. (մեկ.) — Աղէ՛կ դասատու։

Պրի. — Թէ որ մէկը տեսնէր. . .

Բանկ. — Աւելորդ խօսքեր մի՛ ընէր, իմ նազելիս, աստանկ պարագայի մէջ պէտք եղած զգուշութիւնները, կամ, շիտակը ըսելով՝ վարպետութիւնները գիտեմ։

Բէթ. (մեկ.) — Ես ալ դաս կուտամ, նայինք ինչպէս պիտի պատասխանեմ։



Բանկ. — Վշտացած ըլլամ նէ, բարկութիւնս տղաքներէն կը հանեմ։

Բէթ. «մեկ.» — Այդ տղոց վրէժը ես պիտի լուծեմ։

Պրի. — Նայէ՛, եթէ ձախորդ ըլլայ վախճանը՝ մէյ մ'ալ տունս ոտք չես կոխեր։

Բանկ. — Հիմա նստինք փորերնիս կշտացնենք։

Պրի. — Կեցիր երթամ մաքառօնեան բերեմ։ (Կերթայ)

Բէթ. «մեկ.»— Երկուքիդ ալ ախորժակը հիմա կըգոցեմ։

Բանկ. — Ի՛նչ ախորժակ ունիմ։ (Պրիմիտէ մտնէ)

Բէթ. — «մեկ.» Կ'անցնի, կանցնի։

Բանկ. — Ապուրը սրտեղ, խորտիկը հոս։

Պրի. — Երկրաչափութիւն պէտք չէ, հոս։

Բէթ. (մեկ.) — Սա մարդը վայելուչ բաներ գիտէ։

Բանկ. — Սա մաքառօնէն մէյ մը առ նայիմ։

Պրի. — Մատներս պիտի լզեմ։

Բանկ. — Ես ահա աստնի կը ճարեմ ուտելիքս։

(Դուրսէն դուռը կը զարնուի)

Պրի. — Դուռն է։

Բանկ. (Դող եկած) — Դուռն է մի՛. ո՞վ կրնայ ըլլալ։

Բէթ. (մեկ.) — Ա՛ռ քեզի փորձանք մ'ալ։

Պրի. — Սը՛ստ, լռէ. (Բարձր) ան ո՞վ է։

Փար. (Դուրսէն) — Ես եմ, Պրիմիտէ, բա՛ց։

Պրի. — Էրիկս է. ո՛հ. բաներնիս բուսաւ։

Բանկ. — Էրիկդ մի՛. . . ա՛յ նզովից ծնունդ։

Բէթ. (մեկ.) — Աս ինչ աղուոր տեսարան։

Պրի. — Կեցիր, ճրագ մը վառեմ ու հագուիմ։

Բանկ. — Վա՛յ կերակուրիս գլխուն, լմնցա՛յ։

Փար. (Դուրսէն) — Պրիմիտէ, չի բանա՞ս։

Պրի. — Կեցիր սա ճրագը վառեմ, հիմա կուգամ։ Դուն ո՞ւր պիտի պահուըտիս.

Բանկ. — Չեմ գիտեր. տենդս բռնեց։

Պրի. — Սա մառանը մտիր, կծկէ.

Բանկ. — Մառանը մի՛. ես որ կը սոսկամ մուկերէ.

Պրի. — Ուրիշ ճար չի կայ, «խոռչը կը բանայ» չ'ըսա, քեզ նայիմ.

Բանկ. — Գթութիւն, մկան ճրգը լսածիս պէս՝ ձայնս կը ձգեմ։ «Պրիմիտէ զայն խոռչին մէջ կը հրէ ու կը գոցէ»

Փար. «Դուրսէն» — Պրիմիտէ, ի՞նչ կընես, չես գար։

Պրի. — Ահա եկայ, «Դուռը կը բանայ, էրիկը կը մտնէ»

Փար. — Ա՛յ սարսափելի, տարի մըն է դուռը կ'սպասեմ։

Պրի. — Իմ սիրուն էրիկս, անկողինն էի, մինչեւ որ հագուիմ, ճրագը վառեմ գամ ըսի.

Բէթ. «մէկ.» — Նայեցէք, ի՛նչպէս սուտերը կը չարէ։

Փար. — Հազուելդ ի՛նչ պիտի ըլլար.

Պրի. — Գուցէ հետդ մարդ կար. ցուրտ ալ էր.

Բէթ. «մէկ.» — Ա՛յ թշուառական կին։

Փար. — Ի՛նչ ալ կանուխ պառկեր ես.

Պրի. — Քու բարեկամներէդ յիմարպետ մը, որ ճամբէն մոլորած է եղեր, այս գիշեր եկաւ հոս պատսպարուելու, չուզեցի որ . . .

Փար. — Աղէկ ես ըրեր.

Պրի. — Վառարանին քովը եկուր որ քիչ մը տաքնաս.

Փար. — Աւելի անօթութիւն կը զգամ քան թէ ցուրտ.

Պրի. — Ո՛հ, տանը մէջ ուտելիք բան չի կայ. ես ալ բերանս բան չի դրած անկողին մտայ.

Բէթ. «մէկ.» —Իրաւ է, խեղճը բան մը չի կերաւ.

Փար. — Խոհանոցը գետնախնձոր կայ, գնա՛ տաք մոխիրի մէջ եփէ՛, գինի ալ կայ, հաց ալ կը գտնեմ, աս իրիկուն ալ ասանկ կանցունենք.

Բէթ. «մէկ.» — Աղ չեղաւ.

Պրի. — Շատ աղէկ. «մէկ» հոս կենալ չըլլար. «մեկնի»

Բէթ. «Սանդուղէն իջնալով» — Բարի եկաք, Պ. Փարփանիկոս.

Փար. — Հէ՞, աս ո՛վ է.

Բէթ. — Հիւրդ, որ արդէն զքեզ ճանչնալու բարեբաղդութիւնն ունեցած էր.

Պրի, «մտնէ եւ մէկ.» — Այս մարդը հո՛ս, չըլլայ թէ,

Փար. — Այո, կը յիշեմ.

Բէթ. — Կուգայ իր շնորհակալութիւնը յայտնել այս գիշերուան ընդունելութեանդ համար.

Փար, — Շնորհակալ եմ այդ քաղաքավար ընթացքէդ, բայց, կը կարծէի որ այս ժամուս քնացած ես.

Բէթ, — Կը ծխէի, երբ դրան զարնուիլը լսեցի, «մէկ, վարպետ տախտս մը ըլլալու համար կնկան մը քով կէս ժամ կենալը բաւական է, «բարձր» իջնելէս վերջը փոքրիկ» շնորհք մը կը խնդրեմ ձեզմէ,

Փար, — Խօսեցէք.

Բէթ, — Քովս ուտելիք բան չունիմ, տակը տայի քիչ մը ինծի կերակուր ճարէիք։

Փար. — Ես ալ քու վիճակիդ մէջ եմ, բայց կինս կըսէ որ տանը մէջ ուտելիք բան մը չի կայ.

Բէթ.—Ի՛նչ դժբաղդութիւն. տակաւ ալ բան չի գտնուի՞։

Պրի. —Տէր իմ, այս ժամուս, լերան մը գլուխը ի՛նչ ուտելիք պիտի գտնաս։



Բէթ. — Գլուխս պատին զարնելու եմ. «կը մտածէ»

Փար. — Հաւկի՞թ ալ չի կայ տանը մէջ, կնի՛կ։

Պրի. — Հատ մ՚ալ չի կայ։

Փար. — Ցաւահատելի բան է։

Բէթ. «մէկ.» Հրացանը պիտի պարպեմ. «բարձր» ի՛նչ զզուեմ գլուխ ունիմ եղեր, գտա՛յ, մեզի ուտելիք գտա՛յ։

Փար. — Ի՞նչպէս, ըսէ տեսնենք.

Բէթ. — Վրաս պիտի խնդաք, բայց հոգ չէ, ուտելնէդ ետքը կը գոհանաք. 12 տարի է որ ճամբորդութիւն կընեմ։

Փար. —Ափկայ կերակուրի հետ վերաբերութիւն չունի.

Բէթ. — Մ՚աճապարեր, Սպանիոյ մէջ գտնուած ատեններս վհուկ մը ճանչցայ։

Փար. — Աղ ի՞նչ գէշ բան է.

Բէթ. — Նոյն վհուկը ինծի շատ մը գիւթութիւններ սորվեցուց.։

Փար. — Անգլին գնա, գնա՛. ո՞ւր տեղէն գլխուս փրթար։

Բէթ. — Մի՛ վախնար, իմ գիւթութիւններս միշտ աղէկի կելլեն. ես կարող եմ օրինակի համար գիս անարգող կնկան մը ինքզինքս այնչափ սիրցունել՝ որ դայ ոտքերուս իյնայ, կնկան մը անհաւատարմութիւնները երեւան կը հանեմ, ուրուականներ կը ցուցնեմ, ասկէց զատ, կարող եմ կերակուրներ վերցնել եւ ամենահեռաւոր մարդիկը հոս բերել, ուզածիս պէս։

Փար. — Ատիկայ. պարոն, ինծի չես կրնար կըլլեցնել, փորձին նայինք, փորձին։

Բէթ. — Երկու վայրկեանէն փորձով պիտի հաստատեմ. երթամ գիւթական մատեանս ու գաւազանս առնեմ, դուք երկու ճրագ պատրաստէ. «Սանդուղէն ելնէ»

Փար. — Դուն ի՞նչ կ՚ըսես ասոր, կնի՛կ։

Պրի. — Ես կըսեմ թէ յիմար մ՚է, եւ դուն ալ շատ միամիտ մարդ մ՚ես որ անոր կարեւորութիւն կուտաս։

Փար. — Համբերենք նայինք, ի՞նչ պիտի ընէ։

Բէթ. «Վերադառնալով» — Ահա եկայ։

Փար. — Բայց թէոր չի յաջողիս՝ վրադ պիտի խնդանք, ետքը չի վշտանաս։

Բէթ. — Ձեզի բան մը ըսե՞մ, ես պատուաւոր մարդ մը եմ, եթէ խոստումս չի կատարեմ, հարիւր ֆրանք պիտի տուժեմ, բայց եթէ յաջողիմ, կը խոստանա՞ք որ այս իրիկուն ձրիաբար գիս մնուցանէք։

Փար. — Կը խոստանամ։

Բէթ. — Ուրեմն փորձի սկսիմ։ Նախ պէտք է գիտնամ թէ տանը մէջ ո՞վ կայ։

Պրի. «մեկ.» — Գէշ սկսաւ։

Փար. — Ո՞վ պիտի ըլլայ, ահա ես, կինս եւ դուն։

Բէթ. — Տեսնենք, քիչ մը նոքը կը խօսինք։ Ես հիմա կը խոստանամ ձեզի հոս բերել քանի մը տեսակ կերակուր. նայինք որե՞ն կերակուրը պիտի վերցնեմ։

Փար. — Ես ի՞նչ գիտնամ։

Բէթ. — Սարձանիոյ գիւղին մէջէն։

Փար. — Սարձանիա՞, մեր բնակած գիւղն է. ոհ, ո՞վ կրնայ ըլլալ արդեօք այդ Թշուառը։

Բէթ. — Գիւղիս վարժապետը, որ աղէկ դաս կրնայ տալ որկրամոլութեան։

Փար. — Գիւղին վարժապետը մի՛. ի՞նչ աղէկ բան։

Պրի. «մեկ.» Վարժապետին անունն ալ տուաւ, հիմա կը մեռնիմ։

Բէթ. — Ծրագները գեղին չըլլալուն՝ այս գեղին Թըղ-Թուլ քիչ մը պիտի վարագուրեմ յոյսը։

Փար. — Աս ի՞նչ վախ մը մտաւ սրտիս մէջ։

Բէթ. — Ձեւերէս, շարժումներէս, ըսելիքներէս ու ընելիքներէս բնաւ մի՛ վախնաք։

Փար. — Շունչս կը բռնեմ ահա։

Բէթ. — Մօտայ ըսելու Թէ մարդ գտածը ուտելու է։

Փար. — Ուտելիք բան ըլլայ տէ՝ ի՞նչ կուզէ ըլլայ։

Բէթ. — Երթամ, «խորը երթայ ծաղրական ձեւեր կընէ»

Փար. — Դուն ի՞նչ կըսես, կնի՛կ, չըլլես վախնաս։

Պրի. — Ես քեզի պէս ապուշ չեմ։

Բօթ. — Կա՛ց ջութակ եւ Թմբուկ, ծնծղայ, դաշնակ եւ դաշնամուր, կեցէ՛ք։

Փար. «Սարսափով» — Ո՞վ կը կանչէ, կնի՛կ։

Պրի.. — Սատանաները, որ զինքը ասկէ առնեն տանին։

Բէթ. — Փարփանիկոս տակաւին չի ճաշեց։

Փար. — Ո՛չ ըսի, պարոն, տակաւին չեմ ճաշած։

Բէթ — Հիմա կերակուրներուն անունը պիտի տամ։ նախ եւառաջ՝ երշիկ կայ, ակռայիդ կուգա՞յ.

Փար. — Ի՞նչ ըսել է, անով աղէկ կը խմուի, բայց ուժ տուող բան մը չի կա՞յ։

Բէթ. — Ուրախացի՛ր, խոշոր պնակ մը մաքարօնեայ,

Պրի. «մեկ.» — Ա՛յ անօրէն, զիս կը մատնէ։

Փար. — Կնի՛կ, մաքարօնեայ կայ եղեր։

Պրի. — Իմ ախորժակս զոցուեցաւ։

Բէթ. — Պարոն Փարփանիկոս, տեսլին կայ, խոզի մը խորոված ազդրը։

Փար. — Խոզի մը ազդրը՞. հիմա կը Թռչնեմ. ա՛լ բա-



ւական է. մնացածն ալ իրեն տուր որ ուտէ։

Բէթ. — Չէ՛ չէ՛, ունեցածը չունեցածը պիտի վերցնեմ։

Պրիճ. «մեկուսի» — Կայծակ իջնէ գլխուդ։

Փար. — Այդչափ քար սիրտ մ'ըլլար. իրեն ալ ձգէ։

Բէթ. — Ահա մնացածը, աղցան, պանիր, հաց եւ երկու շիշ գինի։

Փար. — Ո՞վ երջանկութեանս.

Բէթ. — Գտիր նայիմ, այս ամենը ո՞ր կողմ բերել տուի։

Փար. — Ես ի՞նչ գիտնամ։

Բէթ. — Հոս վարի մառանը։

Փար. — Մառան մի՛. կնիկ, քալէ երթանք նայինք։

Պրիճ. — Բանալին վրաս չէ՛։

Բէթ. — Գաւազանս բանալիին գործը կը տեսնայ։

Պրիճ. (մեկուսի) — Օր առաջ լմնայիր։

Փար. — Աս ի՞նչ կարգէ դուրս բան է։ Սըվոր նայեցէք. գաւազանը բանալիին գործը տեսաւ.

Բէթ. — Ահա բացուեցաւ։

Փար. — Ո՛վ զարմանք.

Բիէա. — Ահա ըսածներս կողովին մէջն է. (կողովը վեր կ'առնէ)

Փար. — Ելի՛ր, կնիկ, սեղանը պատրաստէ որ ուտենք։

Պրիճ. — Տեղես չեմ երերար. խենդենալու միտք չունիմ.

Փար. — Անուշութեամբ խօսք չի հասկնաս նէ կերպս կը փոխեմ։

Պրիճ. — Ահա սեղանը, կե՛ր խմէ՛, ճաթէ,. (մեկուսի) կերածնիդ փորերնուդ մէջ օձեր դառնան։

Փար. — Նստէ՛ կեր նայիմ, աղուորիկս.

Պրիճ. — Ե՞ս ուտեմ, Թոյն ըլլայ։

Փար. — Բարկութիւնդ ո՞րն է.

Բէթ. — Մի՛ բարկանաք տիկին. բան մը չէ.

Փար. — Իմ սիրունիկս, նստէ՛ կեր ու ինձ մօտիկ ըրէ.

Պրիճ. (մեկուսի) — Ա՛լ համբերութիւնս կը հատնի։

Բէթ. — Քեզ տեսնեմ տիկին Պրիճիտէ.

Փար. (ուտելով) — Ի՜նչ աղուոր երշիկ. ը՜հ, ը՜հ, ը՜ը՜ը՜, սա մաքարօնեային ալ համը առնենք.

Բէթ. — Կեցի՛ր որ բաժնեմ. այսչափը տիկնոջ, այսչափը քեզի, սա ալ ինծի։

Փար. — Մա՛, մա, մա, մա, սա ի՞նչ համով բան է.

Բէթ. — Վարժապետ ըսածիդ կերակուրը ասանկ կըլլայ, տանտէրին հետ խօսք-մէկ՝ աս տեղէն ան տեղէն ըսելով բոլոր աղուոր կերակուրները իրենց փորը կը նետեն.

Փար. — Մեր գեղի վարժապետն ալ ըսածիդ պէս է։

Բէթ. — Դո՞ւք ալ վարժապետ ըսիք.
Փար. — Այո՛, եւ իմ կողակիցիս ազգականներէն է եղեր։
Բէթ. — Սիրուն Գրիճիտէ. սա մեզի պատահածը իրեն ալ պատմէ որ աղէկ մը խնդայ։
Գրիճ. (մեկուսի) — Աս արիկան ուսկի՞ց գլխուս փրթաւ։
Փար. — Ի՞նչ ես եղեր այս իրիկուն կնիկ.
Գրիճ. — Ապո՛ւշ.
Փար. — Ըսէ. ըսէ. սա սեղանը վերցուր նայիմ. (կինը բարկութեամբ սեղանը կը վերցունէ) ինչ կընես. . . պարծենալու համար չէ. բայց ես այն էրիկներէն չեմ որ կընիկներէն կը խապուին. այն էրիկներէն՝ որոնց գլխուն փորձանք կը բերեն կնիկնիննին։ (Գրիճտէ մեկնի) ինչ որ է սիրեցեալ բարեկամս, այս ըրածիդ փոխարէն կ՚ուզեմ որ անգամ մը զքեզ համբուրեմ . . . բայց չէ, . . . կը վախնամ քովդ մօտենալու. միայն թէ քեզմէ բան մը պիտի խնդրեմ.
Բէթ. — Ի՞նչպէս։
Փար. — Աս արհեստդ ինծի ալ սորվեցնես. վասն զի շատ անգամ պէտք կըլլայ ինծի։
Բէթ. — Ատոր վրայ ետքէն կը խօսինք. հիմա սոսկալի գիւտ մը պիտի ցուցնեմ քեզի որ իմ արհեստիս գլուխ գործոցը կը համարուի։
Փար. — Սոսկալի գիւտ մը մի՛. հիմակուց սկսայ դողալ։
Բէթ. — Բան մը որ զքեզ պիտի զարմացնէ եւ թերեւս վախցնէ, բայց ես հոս եմ, ամենեւին մի՛ վախնար։
Փար. — Շուտ ըրէ. ինչ է նէ զուրցէ։
Բէթ. Ոչինչ բան. տանդ մէջ ուրուական մը պահած ես, որ քիչ մը հանգստութիւնդ պիտի աւրէ։
Փար. — Ուրուական մի՛ . . . ա՜հ.
Բէթ. — Հոգ մի՛ ըներ, ես անիկայ կը վռնտեմ։
Փար. — Բայց ո՞ր կողմն է. ըսէ որ սիրտս հանդարտի։
Բէթ. — Մառանը պահուած է.
Փար. — Մառանը՛ . . . վա՜յ ինծ.
Բէթ. — Բնաւ աչքիդ զարկած չէ՞.
Փար. — Ոչ . . բայց . . . այս . . . երբեմն.
Բէթ. — Բան մը իմացա՞ծ ես։
Փար. — Զգիտեմ. դող մը առաւ զիս։
Բէթ. — Տղայութիւն պէտք չէ. հոս եմ ես։
Փար. — Կեցիր,
Բէթ. — Ի՞նչ կայ.
Փար. «Կը կանչէ» — Գրիճիտէ, Գրիճիտէ.
Բէթ. — Ի՞նչ կուզես.



Փար. — Կեցիր կըսեմ. Գրիճիտէ, Գրիճիտէ.
Գրիճ. — (Մտած ատենը) — Ի՞նչ կուզես։
Փար. — Եկուր, հարցուցածիս պատասխան տուր,
Գրիճ. (Մեկուսի) — Վա՜յ ինծ, թէ որ զիս մատնեց։
Փար. — Տանը մէջ բան մը իմացա՞ր.
Գրիճ. — Բա՞ն մը . . . ի՞նչ բան։
Փար. — Մինակ եղած ատենդ վայնասուն մը լսեցի՞ր։
Գրիճ. (մեկուսի) — Ո՛հ, հանդարտեցայ. (բարձր) ի՞նչ աղւոր հարցում, չէ՞ս գիտեր որ այս լեռներուն վրայ հովը տուներուն անգամ կ՚երերցունէ։
Վար. — Ի՞նչ հով . . . ի՞նչ լեռ. . . ի՞նչ տուն. մառանին մէջ խուչոր ուրուական մը կայ եղեր։
Բէթ. (մեկուսի) — Ո՛վ հարուած.
Գրիճ. (մեկուսի) — Կորսուեցայ։ (բարձր առ Բեթ.) ա՜հ պարոն . . . չնորհք.
Բէթ. — Մի՛ վախնաք տիկին. ես զայն պիտի փախցնեմ։
Գրիճ. — Կաղաչեմ, որ. . .
Բէթ. — Աս տունէն վռնտելս կուզէք, այնպէս չէ՞.
Փար. — Հա՛պա. կ՚ուզեքն ալ խօսք է։
Բէթ. — Ուրեմն սիրտ առ Պ. Փարքանիկոս, աղւոր տեղը հասանք. ձեռքդ գաւազան մը առ որ ըսածս ընես։
Գրիճ. (մեկուսի) — Խեղճ Բանկրատիոս։
Փար. — Զաւակացդ արեւուն համար ըլլայ՝ ինծի կռիւի մէջ մի՛ դներ . . . ընտանեաց տէր մարդ եմ ես։
Բէթ. — Օ՛ն. պարապ խօսքեր չուզեր, գաւազանը ձեռք առ եւ մի՛ վախնար. նշան ըրածիս պէս անոր վրայ ինկիր եւ աղէկ մը ծեծէ որ մէյ մ՚ալ հոս ոտք չի կոխէ։ (գաւազան մը կուտայ).
Փար. — Ձեռքէս եկածը կընեմ, բայց. . .
Բէթ. — Ուշադրութիւն . . . գործի կ՚ըսկսիմ. (մառանին դուռը կը բանայ)
Փար. — Ծնկուըներս սկսան դողդղալ.
Գրիճ. (մեկուսի) — Հիմա կը մեռնիմ։
Բէթ. — Ոգի՛դ ուրուական, կը հրամայեմ, ըրէ ըսածս ո՛վ անդնդապետ.
Փար. — Ի՞նչ սոսկալի, անուն։
Բէթ. — Դուրս ել կըսեմ քեզի, թէպէտեւ պատուհանէն կրնայի հանել՝ բայց դո՛ւ կըլլամ դռնէն վռնտելով. ել կըսեմ։
Գրիճ. (մեկուսի) — Ա՛հ Բանկրատիոս,
Բէթ. — Դուրս ել, ապա թէ ոչ՝ խայտառակաբար կը հանեմ քեզ. կը հասկնա՞ս, ահա վերջին անգամ կըսեմ,

*դուրս ելիր։ Փարթանիկոս պատրաստ կեցիր։*

*Փար. — Բայց ծնկունքներս կոտրտեցան. աչքս չեմ կըրնար կոր վեր վերցնել։*

*Բէթ. — Փախիր, դուրս ելիր. ահա կուգայ,* (Բանկրատիոս գլուխը վերարկուով ծածկած մառանէն դուրս կ'ելլէ եւ Պրիճիտէին շուրջը կը դառնայ)։

*Փար. — Ա՛հ հիմա կը մեռնիմ.*

*Բէթ. - - Ահա քեզի ճամբայ կը ցուցնեմ. քեզ [illegible].* (կը ծեծէ)

*Փար.* (ծեծելով)— *Ա՛յ, ա՛յ, ի՞նչ սոսկալի սեւ սատանայ։*

*Բանկ. — Ա՛յ, ա՛յ օգնութիւն, իմ սիրուն Պրիճիտէս օգնութիւն։*

*Պրիճ. —* (մեկուսի) *Հիմա կը մեռնիմ։* (Բանկրատիոս կը փախչի)

*Փար. — Տեղէս երերալու կը վախնամ.* (կը դողդղայ կեցած տեղը)

*Բէթ. — Ահա եկայ, մի՛ վախնար, ես եմ։*

*Փար. — Ա՛հ, քովէս մի՛ հեռանար. կէս ողջ կէս մեռած կը սեպուիմ։*

*Բէթ. — Դուն ի՞նչ կըսես տիկին Պրիճիտէ.*

*Պրիճ. —. Դեռ կը հարցնե՞ս։*

*Բէթ. — Փոթորիկը անցաւ, սիրտ առ.*

*Պրիճ. — Այո՛, բայց . . .*

*Բէթ. — Ինչ որ է, եղածը եղած է. երթանք հանգչինք, խօսք կուտամ որ ալ քեզ այս գիշեր անհանգիստ չընեմ. մինակ սա փոքրիկ օրինակը կրնանք առնել եղածներէն թէ՝ շատ անգամ կը պատահի որ մէկը ծախքեր կընէ եւ ուրիշ մը կը վայելէ։*

ԶԳԻ ՎԱՐԳՈՑՐՆ

(ՎԵՐՋ)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
## ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

---


Դհկն

Սիրային զբօսանք. Տեղական կեանքէ թատերախաղ չորս արարուած. (Բ. տպագրութիւն) . 3

Ներկարարը. Իրական դէպք հինգ արար. . 3

Երանոս աղբար. Կատակախաղ մէկ արար. Գաւառական կեանքէ. (Գ. Տպագրութիւն) . . 1

Մոլորեալ ճամբորդը. կատակախաղ 1 արարուած. Թարգմ. (Բ. տպագրութիւն) . . . 1

Խենդերուն բժիշկը կատակախաղ. Թարգմ. . 2

Շատախօս սափրիչը, կատակախաղ 2 արարուած. Թարգմ. (Բ. տպագրութիւն) . . . 2

Երգարան թատերական . (Հաւաքածոյ) . . 3

Բարեկենդանի Անկուտինները. երգ. կատակ. Թրգմ. 1½


—

## ԶԱՆԱԶԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ


Սեւ դղեկի աւերակները 7 արար. (Թարգմ.) . 7

Հաւատք, Յոյս Սէր. 5 » » » 3

Վեց ու կէս պորտի ժառանգ մնացած սնտուկը. կատակախաղ 1 արար. (Հեղինակ Գ. Հ. Ռշտունի) 2½

Մօլիէռի Երեւակայական Հիւանդը. 3 արար . 2

Մօլիէռի Բռնի ամուսնութիւն. 1 արար . . 2

2286

2013